

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

22. 06. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը , Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերդյանը, Ս. Խալաթյանը, Ն. Սարգսյանը, Հ.Մկրտչյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Տ. Էվինյանը, Ա. Սարգսյանը - մարզպետի օգնականներ
- Լ. Դավաթյանը- ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օրակարգում՝

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարարվեց՝

- 1.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Խաչատրյանին, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝
Համատեղ ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ սույն թվականի հուլիսի 19-ի <<Մետալուրգի օրվա>> միջոցառումներին ԼՂՀ Մարտակերտի վարչական շրջանի շախմատիստ դպրոցականների մասնակցության վերաբերյալ:
2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝
Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին գույքահարկի և հողի հարկի խոշոր ապառքներ ունեցող հարկատուների նկատմամբ դատական գործընթացներ իրականացնելու մասին:
/Ժամկետ 3 օր/
3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովագրության վարչության պետ Ս.Լամբարյանին՝
Առաջարկել համայնքների ղեկավարներին վերահսկողություն սահմանել նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանիտարական վիճակի և սննդի անվտանգության նկատմամբ:
4. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա Ջանազյանին՝
Լոռու մարզում իրականացվող կապիտալ շինարարության նախատեսվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել զանգվածային լրատվամիջոցներին և փոխմարզպետներին:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322/4- 32- 99/

